Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 66-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի 8-րդ կետից հանել «կառուցապատված» բառը, իսկ վերջին պարբերությունը ուժը կորցրած ճանաչել,

2. 2-րդ մասի 1-ին պարբերությունում «11-րդ կետով» բառերից հետո լրացնել «և սույն հոդվածի 3-րդ մասով» բառերը,

3. լրացնել նոր 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Ընդլայնման նպատակով օտարվող հողամասի վաճառքի գինը սահմանվում է՝ ոչ պակաս քան տվյալ հողամասի կադաստրային արժեքից, տասնհինգ տոկոս ավել գումարի չափով։»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։